

ՀՏԴ 82.0

Գ.Վ. ԽԱՉԻԿՅԱՆ
ԴՐՎԱԳՆԵՐ ԱՎԵՏԻՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Բանալի բառեր՝ Ա. Ահարոնյան, Դ.Վարուժան, Կ.Զարյան, Ն.Աղբալյան, Հ.Օշական, Համաստեղ, գեղարվեստական արձակ, պատմվածք, գեղարվեստական արժանիքներ, «Ազատության ճանապարհին» ժողովածու:

Ключевые слова: А. Агаронян, Д.Варужан, К.Зарьян, Н.Адонц, М.Парсамян, Н.Агбальян, А.Ошакан, А.Карапенц, художественная проза, рассказ, художественные ценности, сборник “На пути к свободе”.

Keywords: Av. Aharonyan, D.Varuzhan, K.Zaryan, H.Karapents, N.Adonts, M.Parsamyan, N. Aghbalyan, H. Oshakan, Hamastegh, fiction, a story, values, collected works of “On the way to freedom”.

Ավետիս Ահարոնյանի /1866-1948/ ստեղծագործությունը, մասնավորապես գեղարվեստական արձակը, 20-րդ դարում մեծ ուշադրության է արժանացել արևմտահայ ու սփյուռքահայ գրողների, գրականագետների, ինչպես նաև այլ մտավորականների շրջանում: Դ. Վարուժանի, Կ. Զարյանի, Ն. Աղոնցի, Մ.Պարսամյանի, Ն. Աղբալյանի, Հ. Օշականի, Համաստեղի, Հ. Կարապենցի և ուրիշների ինքնատիպ գնահատականներն ու մեկնաբանությունները շոշափելի ներդրումներ են Ա. Ահարոնյանի ստեղծագործությունն արժևորելու գործում:

Հայ ճանաչված գրող Ավետիս Ահարոնյանի /1866-1948/ ստեղծագործությունները, մասնավորապես գեղարվեստական արձակը, զանազան հայեցակետերից և տարբեր ընդգրկումներով գնահատվել և մեկնաբանվել են դեռևս հեղինակի կենդանության օրոք: Մամուլում տպագրված գրականագիտական հոդվածներում, որոշ դասագրքերում կամ գրողին նվիրված առանձին գրքերում նրա արձակ ստեղծագործությունների արժևորմամբ հանդես են եկել տարբեր սերունդների մի շարք հայ գրողներ, քննադատներ, հասարակական գործիչներ, այլևայլ մտավորականներ: Այս հոդվածում ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում արևմտահայ ու սփյուռքահայ գրողների, քննադատների կողմից

Ահարոնյանի գեղարվեստական արձակ երկերի վերլուծության սկզբունքները և դրանց տրված գնահատականները:

Խորհրդային տարիներին ՀՅԴ անդամ և Հայաստանի Առաջին Հանրապետության ազգային խորհրդի նախագահ Ա.Ահարոնյանի նկատմամբ եղած բացասական վերաբերմունքն արգելված, մերժված գրող էր դարձրել նրան և Խորհրդային Հայաստանում ընթերցողների լայն շրջաններին հեռացրել նրա ստեղծագործություններից: Արևելահայ արձակագրի ազգային կյանքից վերցրած թեմատիկան և հայրենասիրական ու ազատասիրական գաղափարներով ոգևորող ստեղծագործությունները հոգեհարազատ էին սփյուռքում հանգրվանած և հայրենիքի կարոտից մորմոքվող հայության համար: Ահարոնյանի պատմվածքների, վիպակների ու վեպերի գաղափարագեղարվեստական արժանիքների գնահատմամբ հանդես են եկել արևմտահայ ու սփյուռքահայ այնպիսի նշանավոր գրողներ, քննադատներ, գիտնականներ ու այլ մտավորականներ, ինչպիսիք են Դ. Վարուժանը, Կ. Զարյանը, Ն. Ադոնցը, Մ. Պարսամյանը, Ն.Ադրայանը, Հ. Օշականը, Համաստեղը, Հ. Կարապետյանը և ուրիշներ: Բուն հայրենիքում միայն հետխորհրդային տարիներին է, որ մի շարք նշանավոր գրողների ու գրականագետների /Ստ. Թոփչյան, Ա. Եղիազարյան, Ժ.Քալանթարյան, Դ. Գասպարյան և ուրիշներ/ կողմից ըստ արժանվույն գնահատվեց արձակագրի ժառանգությունը: Այս ամենով հանդերձ՝ արևմտահայ ու սփյուռքահայ վերոհիշյալ գրողների, քննադատների ու մտավորականների կարծիքներն Ահարոնյանի ստեղծագործության մասին թե՛ գրապատմական և թե՛ արդիական նշանակություն ունեն: Դրանք յուրովի նպաստում են գրողի արձակ երկերի գեղարվեստական ու գաղափարական բովանդակության տարբեր կողմերն արժևորելուն:

1900-ական թվականներին, ի տարբերություն Ա.Ահարոնյանին «լավկան» ու հոռետես գրող համարողների, Դանիել Վարուժանը նրան բարձր գնահատանքի է արժանացնում իբրև ազատագրական պայքարի երգչի, ինչպես բանաստեղծն է արտահայտվել՝ պայքարի առաքյալ: Հատկապես իր «Ցեղին սիրտը» /1909/ ժողովածուով լայն ճանաչման արժանացած Վարուժանը հենց այս գրքի «Դյուցազնավեպեր» մասում գետեղված «Հովիվը» պոեմն ընծայագրել է «Ա.Ահարոնյանին»¹: Պոեմի թեմատիկան հոգեհարազատ էր Ահարոնյանի ստեղծագործությանը, հատկապես նրա «Ազատության ճանապարհին» /1906/ ժողովածուի պատմվածքներին: Դրանց, ինչպես նաև արձակագրի այլ ստեղծագործություններին Վարուժանն ամենայն հավանականությամբ լավաճանոթ է եղել: Այս մասին է վկայում նաև այն, որ բանաստեղծին հետաքրքրել է Ահարոնյանի «Արցունքի հովիտ» դրաման: Դեռևս Սեբաստիայում ուսուցիչ աշխատելիս «Վարուժանի ղեկավարությամբ մի խումբ օրիորդներ ներկայացնում են Ավետիս Ահարոնյանի «Արցունքի հովիտը»՝ ի նպաստ Գորգի բանվորուհիների միության: Ներկայացումից առաջ Վարուժանը հանդես է եկել բանախոսությամբ /չի պահպանվել/»²:

Իսկ ահա 1909թ. Թիֆլիսի Մետեխի բանտում Ահարոնյանի բանտարկվելու կապակցությամբ Վարուժանը գրում է «Պատգամավորներ» բանաստեղծությունը: 1910թ. «Ազատամարտ»-ում առաջին անգամ տպագրված այս քերթվածն ուներ «Ա.Ահարոնյանին» ընծայականը /հեղինակը հետագայում այն գետեղել է 1912թ. լույս տեսած «Հեթանոս երգեր»-ի «Գողոզոթայի ծաղիկներ» շարքում³: Այստեղ իրեն բնորոշ պատկերավորությամբ Վարուժանը բանտարկված գրողին հուսադրել է, գոտեպնդել՝ գրելով.

Այլ այնտեղ Պայքարն Առաքյալ մ' ունի բանտի մեջ կրանիթ.
Թներովդ հուժկու զա՛րկ, փըշրե՛ խախամն իր լուսամուտին,
Եվ շանթը կտուցիդ՝ Հույան երգե՛ թառած իր ուսին վըճիտ:
Ըսե՛ թե շուտով մենք պիտի կանգնենք արձանն իր փառքին:
Ա՛խ, զընա՛, բագե՛, դափնի՛ մը կտուցիդ:

Սփյուռքահայ նշանավոր գրող ու քննադատ Հ. Օշականը դեռևս 1910-ական թվականներին անդրադառնում է Ահարոնյանի ստեղծագործությունների գնահատմանը: Իրեն բնորոշ գեղագիտական ճաշակով ու խորաթափանցությամբ ներկայացնում է գրողի բազմաժանր երկերի մի շարք էական ձեռքբերումներն ու թերությունները: Ա.Ահարոնյանի արձակ գործերը արժևորելով ժամանակի հայ գրականության գործընթացների մեջ՝ քննադատն անվերապահորեն նշանակալի էր համարում գրողի ներդրումը 1895-1896 թթ. ողբերգական ու հերոսական դեպքերին, ֆիդայական պայքարին գեղարվեստորեն արձագանքելու և իմաստավորելու գործում: Այդ ասպարեզում գրողի ստեղծագործական նվաճումն է համարում «Ազատության ճանապարհին» ժողովածուն: «Մեր դյուցազնամարտին գեղեցկագույն հիշատակարանն է ան, հայրենանվեր գրականության մը հասարակությանց մեջ փառավոր բարձունք մը, ուր աչքերը կը սիրեն հանգչիլ հպարտությամբ: Հարյուր հազարներով նահատակներուն մաքուր արյունովը կարմրած, մեր դյուցազներուն անմահ անձնվիրությամբը թրթռուն, այդ գիրքը լավագույն գոհարն է, զոր կրնանք սիրտի հանգիստով դնել մեռելներուն անձիբ գերեզմանին վրա, մեր սուգին մեջ կերպով մը մխիթարված այդ թանկագին ընծային ընձեռած հպարտ խաղաղությամբը»⁴:

Արևմտահայ քննադատ, Մխիթարյան միաբանության անդամ Ս.Երեմյանն ընդգծում է ն՝ հռոտեսություն, և՛ մարտական տրամադրություններ արտահայտելու գրողի նախասիրությունները, վկայում նրա ձեռք բերած հեղինակության և երիտասարդ գրողների վրա թողած ազդեցության մասին:

1929-ից մինչև 1930թ. սփյուռքահայությունը աշխարհի տարբեր գաղթօջախներում լայնորեն նշեց ճանաչված գրողի գրական գործունեության 40-ամյակը: Միջոցառումների բարձրակետը հանդիսացավ Փարիզի Սորբոնի հանրահռչակ համալսարանում 1930 թ. մայիսի 1-ին տեղի ունեցած մեծարումը, ուր ելույթ է ունենում նաև Ահարոնյանը: Այս հոբելյանի առիթով, մամուլում հրապարակված զանազան տպագիր նյութերից ու հոդվածներից բացի, լույս են տեսնում նաև նրա գրական գործունեությանը նվիրված գրքեր: Դրանց հեղի-

նակները տարբեր ընդգրկումներով և արհեստավարժության տարբեր մակարդակներով են վերլուծում գրողի արձակ երկերը կամ կարծիք հայտնում դրանց մասին: Եվրոպական գիտական շրջաններում հայտնի հայ պատմաբան Ն.Ադոնցը գրողի հորեյանի առթիվ Մորթոնի համալսարանում արտասանած իր խոսքում մատնացույց է անում Ահարոնյանի ստեղծագործություններին բնորոշ և՛ իրատեսական, և՛ ռոմանտիկական երանգները: Արժևորում է նրա ստեղծագործությունների ինքնատիպությունն ու հայ ժողովրդի սերունդներին դաստիարակելու մեծ ներուժը: «Ահարոնյանի հատորները, - ասել է նա, - պիտի կրթեն և ազնվացնեն սերունդները՝ պատվաստելով ասպետական ոգի, հանուն Հայրենիքի բարօրության, ներշնչելով սեր դեպի հայ ժողովուրդը, հայ Հայրենիքը և նրա հրաշակերտ բնությունը»⁵:

Ահարոնյանի գեղարվեստական արձակը մեկ երկի տիրույթում վերլուծելու տեսանկյունից առավել ուշագրավ է գրող և քննադատ Մ.Պարսամյանի 1930 թվականին Փարիզում տպագրված «Ավետիս Ահարոնյան, իր կյանքը և գրականությունը» ուսումնասիրությունը: Հեղինակն Ահարոնյանի ստեղծագործությունները մեկնաբանում է՝ հենվելով համաշխարհային գեղագիտական մտքի, դարասկզբի արևմտաեվրոպական գրականագիտության մեջ տարածված որոշ նոր ըմբռումների, էկզիստենցիալիզմի, ինտուիտիվիզմի փիլիսոփայական հայեցողության սկզբունքների վրա: Գրողի ստեղծած կերպարները նա քննում է նրանց գիտակցական ու ենթագիտակցական ներունակության, անհատի և հասարակության փոխհարաբերությունների հարթության վրա՝ կարևորելով հայ մարդու ներաշխարհն ազգային ու համամարդկային արժեքների դիտանկյուններից արծարծելու հանգամանքը: Մ.Պարսամյանն իր համեմատաբար ծավալուն գրքում փորձում է նաև պարբերացման ենթարկել նրա ստեղծագործական գործունեությունը: Քննադատն առանձին երկերի մեկնաբանությունների կապակցությամբ կարողանում է դրսևորել նուրբ դիտողականություն, փորձում է բացահայտել գրական երկի ենթատեքստը, ցույց տալ գրական ստեղծագործության, կերպարների՝ իրականության հետ ունեցած առնչությունները: Այս ամենով հանդերձ, մեր համոզմամբ, նա մնացել է գրական երկային իրենց տեսանելի մակերևույթով մեկնաբանելու մակարդակի վրա: Առանձին երկերի՝ խանդավառությամբ տրված բարձր գնահատականները հաճախ չեն հիմնավորվում բովանդակության ու ձևի, լիարժեք, համակողմանի մեկնություններով կամ էլ տրվում են մակերեսային բացատրություններ: Իսկ որոշ ստեղծագործությունների տրված երբեմն չափից ավելի բարձր գնահատականը թերևս ավելի շատ դրանց վրա ուշադրություն հրավիրելու հանգամանքով էր պայմանավորված: Այսպես, օրինակ, նկատի ունենալով մի քանի, իրոք, գեղարվեստորեն արժեքավոր երկեր /«Ճամփորդը», «Երբ ձյունն իջնում է», «Կաթուղիքը», «Մոխիրների տակից»/, նա գրում է. «Իր պատմվածքներու այս նոր շարքով Ահարոնյան մեր գեղարվեստական գրականության մեջ նոր հորիզոններ նկարեց: Համամարդկային հարցերն են, որ իր գրչին տակ

թն առնել կը սկսին»⁶: Հատկապես գրողի սփյուռքյան շրջանի արձակ երկերի գաղափարագեղարվեստական նոր որակները նկատի ունենալով՝ առանձնացնում է այս շրջափուլը, կատարում է ինքնատիպ դիտարկումներ: Խոսելով «Իմ գիրքը» երկի մասին՝ նշում է նրա ուրույն նշանակությունը գրողի ժառանգության մեջ: «Անիկա խտացումն է իր բովանդակ գրականության, մտածումներուն ու զգայուն հոգիին»⁷: Ուսումնասիրության մեջ կան ուշագրավ մեկնություններ, բայց և այնպես դրանք հետևողական տրամաբանությամբ, ամբողջական և կուռ շարադրանքով չեն ներկայացնում Ահարոնյանի ստեղծագործության խոր, համակողմանի գրականագիտական վերլուծությունը: Մ.Պարսամյանի այս գիրքը, այնուամենայնիվ, մնում է գրողի մասին մինչև այդ հրատարակված առավել ընդգրկուն, առանձին դեպքերում դիպուկ մեկնաբանություններ ու գնահատություններ պարունակող միակ ծավալուն ուսումնասիրությունը:

Այս շրջանում գրականագետ Ն.Ադբայանը Ահարոնյանի մասին խոսելիս ընդգծել է ազգայինը համամարդկային խնդիրների հետ հարաբերակցելու նրա գաղափարական, փիլիսոփայական կենսադիրքորոշումը. «Որքան և վեճ լինի իր արվեստի կատարելության մասին, սակայն, եթե տասնի ճաշակին գոհացում չի տալիս, հազարի սրտից է խոսում և հազարներին սովորեցնում մտածել ու գործել հանրորեն, սա ինքնին մեծ գործ է: Հանապազօրյա հացն է սա քաղաքական հայտության համար և մեծ խթանը ինքնամփոփ հային դուրս գալու համար իր առանձնությունից»⁸:

Համաստեղը ևս Ահարոնյանի ստեղծագործություններում նկատել էր տարբեր գրական ուղղություններին /իրապաշտություն, վիպապաշտություն, խորհրդապաշտություն, դեկադենտություն/ բնորոշ սկզբունքների դրսևորումներ: Բացի այս, նա սերտ կապ էր տեսնում Ահարոնյանի ստեղծագործությունների և անցյալի հայ գրողների /Աբովյան, Բաֆֆի, Ալիշան, Պեշկյաշյան/ ստեղծած գաղափարական ու գեղարվեստական ավանդույթների միջև: Իբրև գրողի ոճի ինքնատիպության դրսևորում՝ Համաստեղն ընդգծում էր Ահարոնյանի ենթակայական, գաղափարական-գեղագիտական մոտեցումը կերպարների կերտման գործում: «Անոր համար,-գրում է նա,- կարևոր էր իր ըսելիքները գեղեցիկ ձևով ըսել: Անոր համար զրկանք էր չհարստացնել իր ճոխ երևակայություններով տիպը կամ նկարագիրը, եթե այդ ըլլա «Մայրը» և կամ տիրացու «Սողոմն»⁹: Համաստեղը վկայում է, որ Ահարոնյանի անունը ժողովրդի համար դարձել էր «հմայիչ ու կախարդական», իսկ դրա համար նախադրյալներ էին հանդիսանում գրողի անկեղծությունը, ժողովրդի հույզերն ու զգացմունքներն արտահայտելու կարողությունն ու մեծ հայրենասեր լինելու ընդունակությունը: «Ահարոնյանի գրականության մեջ,- գրում է Համաստեղը,- կար մեկ ձգտում, մեկ նպատակ՝ փրկել հայ ժողովուրդը. Լաոկոոնի և իր զավակներուն նման բռնված էր հսկայական օձերով: Քննադատները այդ էր, որ չուզեցին ըմբռնել և Ահարոնյանի մեջ փնտրեցին գրական դպրոցի մը նկարագիրը: Ահարոնյան էթե

գրագետ չըլլար, ան պիտի քալեր Հայաստանի լեռներեն որպես ֆետայի՝ ինքզինքը զոհելու հայ ժողովուրդին: Ահարոնյանի մը և կամ Անդրանիկի մը դերերը նույնը եղած են մեր ազգային գոյության պայքարին մեջ»¹⁰:

Գրողի որդուն՝ Վ.Ահարոնյանին, հաջողվում է ԱՄՆ-ում՝ Բոստոնում, 1947-ից մինչև 1951թ.-ը տպագրել հոր ստեղծագործությունների տասնհատորյակը: Առաջին հատորում նա զետեղել է «Ավետիս Ահարոնյան /կյանքը և գործը/» վերնագրով ընդարձակ ակնարկը: Այն արժեքավոր է հատկապես Ա.Ահարոնյանի կենսագրության մասին հեղինակի գրի առած հավաստի տեղեկությունների շնորհիվ:

1958թ. գրողի մահվան 10-ամյակի առթիվ գրած փորձագրության մեջ Ահարոնյանի ստեղծագործությունների արժևորմանը հատկապես դրամատիկական իրադրություններում հոգեբանական նրբերանգներով կերպարներ կերտելու դիտանկյունից էր մոտենում գրող և հրապարակախոս Հ.Կարապենցը: «Իր մտասևեռումը մարդն է ու մարդկային ողբերգությունը,- գրում է նա: - Եվ իր հոգեբանի կարողության շնորհիվ Ահարոնյանը ճշգրտորեն վերլուծում է ներաշխարհները, թափանցում սրտերի մեջ և շոշափելով էականը՝ կերտում տիպարներ: Անզերագանցելի է Ահարոնյանը, երբ գործ ունի հոգեկան տագնապների ենթակա նկարագրերի հետ: Այդտեղ իր կատարյալ տարերքի մեջ է»¹¹:

Ա. Ահարոնյանի և նրա ստեղծագործությունների հանդեպ հետաքրքրությունը սփյուռքում իր հերթական կիզակետին է հասնում 1966 թ.-ին գրողի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ: Բեյրութում հրատարակվող «Բազին» գրական հանդեսի այս տարվա թիվ 8-9 միացյալ համարն ամբողջությամբ նվիրվում է նշանավոր գրողին: Տպագրված նոր նյութերի մեջ հատկապես ուշագրավ են և արժեքավոր Ահարոնյանի մի քանի պատմվածքների վերլուծությունները, որոնք տրված են Պ.Մնասայանի ««Ղեղոյի արտի»-ի ակոսներուն», Ա. Հայկազի ««Հազրե»-ի ընթերցումը», Ն. Փաթանյանի «Վազրիկը ազատության ճանապարհին վրա» հոդվածներում: Դրանք այս պատմվածքների վերլուծության առաջին փորձերն էին: Հանդեսի «վարիչ խմբագիր» Կ.Սասունին ձգտում է ուրվագծել գրողի տեղն ու բերած նորությունները հայ գրականության մեջ, նշում կրած գրական ազդեցությունները: Նա մասնավորապես գրել է. «Եթե մեկ կողմ դնենք Ահարոնյանի քաղաքական, բանասիրական և պատմական երկերը և միայն ուշադրության առնենք իր գրական ստեղծագործությունները, պիտի տեսնենք Բաֆֆիի անմիջական հաջորդը, իր շունչով և ազգային ձգտումներով. ան լայն շունչով մը կը շարունակե վիպագրությունը արևելահայ գրականության մեջ: Բաֆֆին Ահարոնյանի տարբերությունը այն է, որ իրապաշտ ու խորհրդապաշտ ուղղություն մը կընդգրկե Ահարոնյան, պահելով վիպապաշտ դպրոցի հատկությունները»¹²: Իսկ ահա, գրող, գրականագետ Մուշեղ Իշխանը, ընդգծելով Ահարոնյանի երկերում դրսևորված ռոմանտիկական /Խ.Աբովյանի նման «բանաստեղծ հոգի մըն է»/ և իրապաշտական սկզբունքների համադրությունը, ավելացնում է, որ. «Գաղափարական ընդհանուր մտահոգությունը իր

մեջ ավելի գորավոր է, քան արվեստի կատարելության ձգտումը: Երբեմն իր հերոսները կը վերածվին տառապանքի մարմնացումներու կամ դյուցազնական գերմարդերու: Այս բոլոր չափազանցություններուն փոխարեն, որոնք կը վնասեն իր երկերու բնականության, Ահարոնյան իր գունագեղ նկարագրություններով կը հմայե մեզ»¹³: Վերոհիշյալ տպագիր նյութերում դրսևորված մոտեցումները, անկախ ձևակերպումների ճշգրտության աստիճանից /ինչպես նաև կուսակից ընկերոջը դրվատելու ջանքից/, Ա.Ահարոնյանի գրական ժառանգությունը լրջորեն, գրականագիտության ընդհանուր առմամբ ընդունելի ըմբռնումների, այս դեպքում՝ գրապատմական ու տեսական օրինաչափությունների տեսանկյուններից կատարված դիտարկումներ էին՝ չհաշված մասնակի վրիպումները:

Արևելահայ իրականության մեջ նախախորհրդային շրջանում, Ահարոնյանի գեղարվեստական ստեղծագործությունների մասին դրվատանքով գրողներից բացի /Լեո, Վրթ. Փափազյան և ուրիշներ/, եղել են նաև սուր քննադատական վերաբերմունք արտահայտողներ: Իրենց քաղաքական ու գեղագիտական հայացքների դիտանկյունից Ահարոնյանի երկերը քննադատաբար էին գնահատում Յ. Խանգաղյանը, նշանավոր բանաստեղծ Վ.Տերյանը: Հայտնի է, որ Վ.Տերյանն իր «Հայ գրականության գալիք օրը» /1914/ ելույթ-ուսումնասիրության մեջ, մտորելով հայ գրականության զարգացման հեռանկարի մասին, բացահայտ կերպով ժխտում էր Ահարոնյանի գրական ճանապարհի արդյունավետությունը՝ նախապատվությունը տալով Շիրվանզադեին: Ժամանակակից հայ քննադատության մեջ արդեն դիտվել է, որ հայ մեծ բանաստեղծի նման դիրքորոշումը և այդ ելույթում արտահայտված այլ ծայրահեղ գնահատականները պայմանավորված էին ոչ միայն գեղարվեստականության բարձր չափանիշների պահանջով, այլև գաղափարական տարաձայնություններով: Տերյանը ազգային կուսակցությունների սոցիալական ու քաղաքական միտումներին հակադրվում էր «նոր ինտելիգենցիայի»՝ «ռուս առաջավոր դեմոկրատ ինտելիգենցիայի» ազգային-քաղաքական ու մշակութային ծրագրերի հայեցակետից: «Զգալի չափով հենց գաղափարական այս հակադրությանը պետք է վերագրել 19-րդ դարի գրականության և աշխարհայեցության տերյանական քննադատության ծայրահեղությունը»¹⁴:

Կարծում ենք՝ Ահարոնյանի նկատմամբ Վ. Տերյանի վերաբերմունքը մասամբ պայմանավորված էր նաև ահա այն հանգամանքով, որ արձակագիրն այդ ժամանակ արդեն Դաշնակցություն կուսակցության ճանաչված դեմքերից էր: Փաստորեն, առավելապես այդ քաղաքական հայեցակետից էր Ահարոնյանին քննադատում նաև Յ. Խանգաղյանը: Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանի նախկին նախագահ Ա. Ահարոնյանի նկատմամբ Խորհրդային տարիներին առաջացած բացասական վերաբերմունքի պատճառով նրա գեղարվեստական ստեղծագործությունները գնահատելիս սահմանափակվեցին առավելապես Յ. Խանգաղյանի, Էդ. Ջրբաշյանի, Ա. Օհանյանի

ակնհայտ կերպով միակողմանի գնահատականներով ու մակերեսային վերլուծություններով¹⁵: Այդ համապատկերում հողվածում ներկայացված արևմտահայ հեղինակների կարծիքներն ու մեկնաբանությունները ավելի շատ են նպաստում իր ապրած ժամանակաշրջանում սիրված ու լայն շրջանակներում ընթերցվող գրողի ստեղծագործությունների գրականագիտական վերլուծությանը: Դա հատկապես ակնառու է դարձել այսօր, երբ հայ ժամանակակից ճանաչված գրականագետների կողմից Ահարոնյանի մասին գրվել են հողվածներ՝ աննախապաշար մոտեցմամբ, գիտական բարեխղճությամբ: Նրա մասին պաշտպանվել են թեկնածուական /հեղինակ՝ Վ. Գրիգորյան/ և դոկտորական /հեղինակ՝ Գ. Խաչիկյան/ ատենախոսություններ: Ասվածից հետևում է, որ քաղաքական հայացքներով ու շահերով պայմանավորված աչառու մոտեցումը գրողի գեղարվեստական ստեղծագործությունները վերլուծելիս և արժևորելիս խանգարում է գրական երևույթը անկողմնակալ կերպով, ըստ իրական արժանիքների գնահատելու գործին:

Г.В.Хачикян

Эпизоды из истории оценки творчества Аветиса Агароняна

Творчество знаменитого армянского писателя Аветиса Агароняна /1866-1948/ в частности, художественная проза в 20-ом веке была удостоена большого внимания среди западно-армянских, зарубежно-армянских писателей, литературоведов, а так же в кругу других. Своеобразная оценка и литературоведческий анализ Д.Варужана, К.Зарьяна, Н.Адонца, М.Парсамяна, Н.Агбальяна, А.Ошакана, А.Карапентца и других внесли заметный вклад в деле оценивания творчества А.Агароняна.

G.V.Khachikyan

Extracts From the History of Avetis Aharonyan's Work Estimation

In the 20th century several writers from the Armenian diaspora and Western Armenia, many specialists of Literature Studies, as well as intellectuals paid great attention to the works of Avetis Aharonyan /1866-1948/, particularly to his fiction. Peculiar estimations and commentaries of D. Varuzhan, K. Zaryan, H. Karapents, N. Adonts, M.Parsamyann, N. Aghbalyan, H. Oshakan, Hamastegh and others have had appreciable contribution to the evaluation process of Av. Aharonyan's work.

Գրականություն

1. Վարուժան Դ., Երկերի լիակատար ժողովածու, երեք հատորով, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե, 1986, հ. 1, էջ 204:
2. Շարուրյան Ա., Դանիել Վարուժանի կյանքի և ստեղծագործության տարե-

- գրություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե, 1984, էջ 154:
3. Վարուժան Դ., Երկերի լիակատար ժողովածու, երեք հատորով, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե, 1986, հ.2, էջ 116:
 4. Օջական Հ., Արևելահայ դեմքեր, Բեյրութ, 1999, էջ 99-100:
 5. Նիկողայոս Ադոնցի խոսքը Ավետիս Ահարոնյանի հորեյանի առթիվ // «Գրական թերթ», Ե, 2000, սեպտեմբեր 1-15, էջ 2;
 6. Պարսամյան Մ., Ավետիս Ահարոնյան..., Փարիզ, 1930, էջ 79:
 7. Նշվ. աշխ., էջ 84:
 8. Մեջբերումն ըստ՝ Գ.Լազյան, Դեմքեր հայ ազատագրական շարժումեն, Կահիրե, 1949, էջ 238:
 9. Համաստեղ, Ավետիս Ահարոնյան //«Բագին», Բեյրութ, 1966, թիվ 8-9, էջ 22:
 10. Համաստեղ, Ա.Ահարոնյանի մահվան առթիվ//Համաստեղ, Մոռացված էջեր, Ե., հ. Բ, 2005 էջ 68:
 11. Կարապենց Հ., Երկու աշխարհ: Գրական փորձագրություններ, Բոստոն, 1992, էջ 323:
 12. Սասունի Կ., Ավետիս Ահարոնյան /համառոտ ակնարկ/ //«Բագին», Բեյրութ, 1966, թիվ 8-9, էջ 27:
 13. Իշխան Մ., Երկեր, «Նաիրի», Ե, 1990, էջ 535:
 14. Հայ քննադատության պատմություն, 2 հատորով, ընդհ. խմբ. Ս.Ն. Սարինյանի, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Ե., 1998, հ. 2, էջ 220:
 15. Տես՝ Խանգաղյան Ց., Ավետիս Ահարոնյան, ՀՄԽՀ պետհրատ, Ե., 1926: Հայ նոր գրականության պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1979, հ. 5, էջ 81-83, 749-752:

Տեղեկություններ հեղինակի մասին

Խաչիկյան Գագիկ Վահեի – ք. գ. դ., դոցենտ, Գյումրու Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ, Հայ գրականության, նրա դասավանդման մեթոդիկայի և լրագրության ամբիոնի վարիչ, E-mail: gagikkhachikyan@gmail.com

Տրվել է խմբագրություն 17.05.2013